ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2013

1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1 Տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորում

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ կառավարության 02.02.2012թ. թիվ 135-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրից բխող հետևյալ գործառույթները.

ա) մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ: Առաջարկությունների մշակման գործընթացում ուսումնասիրվել է եվրոպական երկներում գործող նմանատիպ հիմնադրամների փորձը: Կազմակերպվել են նաև ուսումնական այցելություններ Ուկրաինա և Վրաստանի Հանրապետություն՝ վերջիններիս տարածքային զարգացման հիմնադրամի փորձը առավել մանրամասն ուսումնասիրելու նպատակով:

ՀՀ-ում տարածքային զարգացման հիմնադրամի հիմնական նպատակը պետք է հանդիսանան մի կողմից՝ նպաստումը տարածքներում աղքատության նվազեցմանը, մյուս կողմից՝ դրա հետ թղթակցվող, տարածքների տնտեսական գրավչության և մրցունակության բարձրացումը: Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև հետևյալ հանգամանքներով, մասնավորապես.

1. ՀՀ մարզերում (համայնքներում) տարածքային համաչափ զարգացման և տվյալ տարածաշրջանի աղքատության կրճատման մակարդակի առումով իրականացվող տարբեր տեսակի ներդրումների արդյունավետության գնահատման բացակայությունը,
2. ՀՀ-ում տարածքների համաչափ զարգացման գնահատման ապահովման տարբեր ֆինանսական միջազգային կառույցների և դոնորների միջոցներով իրականացվող ծրագրերի համակարգման անհրաժեշտությունը:

Միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի համար առաջարկվել են հետևյալ գործառույթները՝

1. հանրապետությունում մասնավոր հատված - պետություն համագործակցության արդյունքում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացում և մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծրագրերին աջակցության ցուցաբերում.

*2.*համայնքների ֆինանսական և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում.

3. միջհամայնքային համագործակցության խրախուսում.

4. ուղղակի կապիտալ ծրագրերի իրականացում:

Փաստաթղթում ներկայացվել են նաև տարածքային զարգացման հիմնադրամի կառավարման մեխանիզմների, միջոցների ձևավորման աղբյուրների, բաշխման ուղղությունների և եղանակների, գործունեության իրավական ձևաչափի, բյուջեի և սոցիալ տնտեսական այլ փաստաթղթերի հետ կապի վերաբերյալ առաջարկություններ:

բ) ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրերի համատեղ համագործակցության արդյունքում վերանայվել և թարմացվել է «Համայնքների տիպաբանության զարգացում» ծրագրի տեղեկատվական բազան:

Գնահատելով տեղեկատվական բազայի կարևորությունը՝ ՀՀ ՏԿՆ-ի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան կարգ, որով սահմանվում է տեղեկատվական բազայի շարունակական թարմացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման ընթացակարգերը: Միաժամանակ նկատի ունենալով վիճակագրական տվյալների մատչելի և արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը՝ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) հետ «Համայնքային տիպաբանություն» ծրագրի տեղեկատվական բազան «Արմդեվինֆո» ծրագրի գործիքակազմով շահագործելու ուղղությամբ, որը հանդիսանալով վիճակագրական վերլուծությունների համար ավելի լայն հնարավորություն ընձեռող ծրագիր՝ կհեշտացնի համապատասխան վերլուծություններ իրականացնելու հնարավորությունները: Ներառված վիճակագրական տեղեկատվությունը կարող է օգտագործվել համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի դինամիկ վերլուծության և համայնքների աջակցությանը միտված ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Տեղեկատվական բազայում ներառված 12 ցուցանիշներով համայնքների սոցիալ-

տնտեսական զարգացման մակարդակի ամփոփ գնահատման մեթոդաբանության հիման վրա հաշվարկվել է նաև համայնքների աղքատության գնահատման մոդիֆիկացված համաթիվը:

գ) Վերլուծվել է աղքատության մոդիֆիկացված համաթվի հիման վրա գնահատված համայնքային աղքատության կրճատման վրա 2011-2012թթ. բոլոր աղբյուրներով կատարված կապիտալ ներդրումների ազդեցությունը: 2011-2012թթ. բոլոր աղբյուրներով իրականացված կապիտալ ներդրումների ազդեցության գնահատման արդյունքում քաղաքային թվով 35 համայնքներում կրճատվել է աղքատության մակարդակը: Աղքատության մոդիֆիկացված համաթվի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում՝ 0.57, իսկ ամենացածրը՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում՝ 0.18: Մասնավորապես ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային համայնքում իրականացված Մյասնիկյան փողոցի ասֆալտապատման աշխատանքի հետևանքով աղքատության մոդիֆիկացված համաթիվը 0.59-ից դարձել է 0.57, իսկ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքային համայնքում իրականացված Ա/ճ Հ-28-Ծաղկաձորի մարզահամալիրի 11-րդ կմ-ում սողանքային տեղամասի և Մ4 - Ծաղկաձոր, կմ0+000-կմ4+282 ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքների հետևանքով աղքատության մոդիֆիկացված համաթիվը 0.20-ից դարձել է 0.18: Իսկ գյուղական համայնքներից աղքատության մակարդակը նվազել է 36-ում: Աղքատության մոդիֆիկացված համաթվի ամենաբարձր ցուցանիշն է գրանցվել ՀՀ Արարատի մարզի Շաղափ համայնքում՝ 0.65, իսկ ամենացածրը՝ ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում՝ 0.12: Մասնավորապես՝ ՀՀ Արարատի մարզի Շաղափ համայնքում իրականացված՝ խմելու ջրագծի կառուցում աշխատանքի հետևանքով աղքատության մոդիֆիկացված համաթիվը 0.66-ից դարձել է 0.65, իսկ ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ճանապարհների վերանորոգման աշխատանքի հետևանքով՝ 0.14-ից դարձել է 0.12:

1.2 <u>2012 թվականին իրականացված հրատապ ծրագրեր</u>

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ մարզերի մի շարք հրատապ խնդիրների լուծման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսված կառավարության պահուստային ֆոնդի հաշվին իրականացվել են շուրջ 17,4 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ, որից 4,7 մլրդ դրամը նախատեսված է եղել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N108-Ն որոշմամբ, 10,0 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի N 711-Ն և ևս 2,7 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1392-Ն որոշումներով: Դրանք հիմնականում եղել են կրթական, նախադպրոցական, մշակութային, առողջապահական հաստատությունների, համայնքային կենտրոնների, ճանապարհաշինության, ջրամատակարարման, գազիֆիկացման, ոռոգման ցանցերի, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգմանն ու վերակառուցմանն ուղղված ծրագրեր: Ըստ ոլորտների և համայնքների՝ ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ներկայացված է ***հավելված 1***-ում:

Նախարարության կողմից իրականացվել է մարզպետարաններից համապատասխան ծրագրերի հավաքագրման, ամփոփման և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացման գործառույթ: Աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով հսկողություն է սահմանվել նախագծային և շինարարական պայմանագրերի ժամանակին և օրենսդրության պահանջին համապատասխան կնքման, շինարարական աշխատանքների՝ սահմանված ժամկետում ավարտման, ինչպես նաև կատարված աշխատանքների դիմաց պատշաճ վճարումներ կատարելու ուղղությամբ: Տնտեսված գումարների վերաբաշխման նպատակով մի շարք փոփոխություններ են իրականացվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են նաև հատուկ կարգեր՝ մի շարք ծրագրերով (մասնավորապես՝ բնակարանաշինության) նախատեսված միջոցների արդյունավետ բաշխման նպատակով:

Ընդհանուր առմամբ նախատեսված գումարներով վերանորոգվել են 171 համայնքի 115 դպրոցներ, բարելավվել շուրջ 24206 աշակերտների ուսումնական պայմանները, ինչպես նաև բարենպաստ աշխատանքային պայմաններ են ստեղծվել շուրջ 2762 ուսուցիչների համար, 34 համայնքներում իրականացվել են 138 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ, ինչի արդյունքում բարելավվել են 5448 ընտանիքի կենցաղային պայմանները, 36 համայնքներում իրականացվել են 36 մշակութային օբյեկտների վերանորոգման աշխատանքներ՝ բարելավելով շուրջ 246 աշխատակցի աշխատանքային պայմանները, 21 համայնքներում վերանորոգվել են 24 նախադպրոցական հաստատություններ՝ բարելավելով շուրջ 1864 երեխայի, ինչպես նաև 278 աշխատակցի պայմանները, 28 համայնքներում իրականացվել են ջրամատակարարման որակի բարելավման աշխատանքներ, 33-ում գազաֆիկացման և ներքին գազատարերի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում շուրջ 5477 ընտանիքներում բարելավվել է խմելու ջրի որակը և շուրջ 1258 բնակարաններ գազաֆիկացվել են,

իրականացվել են շուրջ 8.5 կմ ոռոգման ջրագծերի շինարարարական աշխատանքներ, որի արդյունքում ոռոգելի է դարձել 580 հա հողատարածք, վերանորոգվել են 9 համայնքային բուժամբուլատորիաներ, 17 համայնքային կենտրոնների շենքեր, իրականացվել բակերի բարեկարգման, հեղեղատարների կառուցման և այլ ծրագրեր:

1.3 Մարզային զարգացման ծրագրերի աշխատանքային պլանի կազմման և մոնիթորինգի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից մշակված միասնական ձևաչափով ՀՀ մարզպետարաններից հավաքագրվել, վերլուծվել, ամփոփվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի թիվ 23-Ա և 68-Ա հրամաններով հաստատվել է մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերով նախատեսված 2012 թվականին իրականացվելիք տարեկան աշխատանքային պլանները: Տարեկան աշխատանքային պլանի հիման վրա հուլիս-օգոստոս ամիսներին իրականացվել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կիսամյակային հաշվետվությունների մոնիթորինգ: Կիսամյակային մոնիթորինգի արդյունքներով ամենաբարձր կատարողական ցուցանիշն արձանագրվել է ՀՀ Շիրակի մարզում՝ 67.9%, իսկ ամենացածրը՝ ՀՀ Արմավիրի մարզում՝ 21.2%:

1.4 Մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող ընթացիկ տեղեկանքների կազմում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և ըստ անհրաժեշտության ՀՀ Նախագահի աշխատակազմ են ներկայացվել ՀՀ մարզերի սոցիալ տնտեսական իրավիճակը բնութագրող տեղեկանքները: Տեղեկանքները պարունակում են ՀՀ մարզերի ֆինանսական, քաղաքաշինական, բնակկոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, ենթակառուցվածքների, գյուղատնտեսության, բնապահպանության, հողօգտագործման և հողաշինության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի բնագավառներում առկա իրավիճակների, կատարված աշխատանքների, ինչպես նաև առկա հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություններ: Հանրային օգտագործման նպատակով տեղեկանքները տեղադրվել են նաև նախարարության էլեկտրոնային կայք-էջում:

1.5 Վարչական վերահսկողություն

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի տվյալ տարվա վարչական վերահսկողության իրականացման աշխատանքային ծրագրերը կազմելու նպատակով մարզպետարաններից հավաքագրվել են համապատասխան առաջարկություններ, որոնք համեմատվել են Վերահսկիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության աշխատանքային ծրագրերով նախատեսված համայնքների հետ՝ բացառելու համար նույն համայնքներում նույն բնագավառում իրականացվող հսկողությունների կրկնությունը (առկա է եղել մեկ համընկնում, որը մարզպետի հետ քննարկումների արդյունքում փոփոխվել է): Նույն համայնքի նույն բնագավառում երկու տարի անընդմեջ հսկողության իրականացումը բացառելու նպատակով տվյալ տարվա աշխատանքային ծրագիրը համեմատվել է նաև նախորդ տարվա վարչական հսկողության աշխատանքային ծրագրի հետ, այնուհետև ծրագիրը ներկայացվել է տարածքային կառավարման նախարարի հաստատմանը: Անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով աշխատանքային ծրագրում իրականացվել են փոփոխություններ:

Մարզպետարանների կողմից իրականացված հսկողության արդյունքները հավաքագրվել են և յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Ներկայացված արդյունքների հիման վրա ստուգվել են իրականացված հսկողության համապատասխանությունը հաստատված տարեկան աշխատանքային ծրագրին և օրենսդրությամբ սահմանված բնագավառներին: Ներկայացված ստուգման ակտերի հիման վրա կազմվել Է եռամսյակային հաշվետվություն՝ արձանագրված խախտումների վերաբերյալ, որը տեղադրվել է նախարարության ինտերնետային կայք-էջում: 2012 թվականին ՀՀ մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 288 համայնքներում:

Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերվել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և այլ

օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը: Նախարարության կողմից հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված աշխատանքների նկատմամբ:

1.6 Երևան քաղաքի ավագանու որոշումների և մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողության իրականացում:

2012 թվականին իրավական հսկողություն է իրականացվել Երևան քաղաքի ավագանու թվով 548 որոշումների և մարզպետի թվով 4082 իրավական ակտերի նկատմամբ: Հսկողության արդյունքի հիման վրա արձանագրվել են իրավական տեխնիկայի պահանջների չկատարման որոշ դեպքեր: Այդ դեպքերում հանձնարարվել է ակտերը համապատասխանացնել գործող օրենսդրության կանոններին: Վերահսկվել է նաև գործառույթի կատարման ընթացքը:

Ակտերը վերլուծվել են նաև ըստ ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրում նշված մարզպետի գործունեության իրականացման բնագավառների՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և այլն: Ընդունած որոշումների մեջ մեծ թիվ են կազմում սոցիալական բնագավառներին առնչվող որոշումները:

2012թ. հսկողություն է սահմանվել մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերը մարզպետարանների ինտերնետային կայք-էջերում պարտադիր տեղադրելու ուղղությամբ:

1.7 Ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողության

2012 թվականին ամփոփվել և նախարարության ինտերնետային կայք-էջում տեղադրվել են նաև համայնքի ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողության արդյունքները: 2012 թվականի ընթացքում համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել թվով 19511 որոշում, որից ոչ իրավաչափ է համարվել թվով 950 իրավական ակտ, որի տեսակարար կշիռը կազմում է 4.9 %: Ավագանու որոշումները սահմանված ժամկետում մարզպետարան չներկայացնելու պատճառով կարգապահական տույժի են ենթարկվել 4 համայնքի աշխատակազմի քարտուղարներ:

1.8 Մարզպետների գործունեության գնահատում

2012 թվականին ՀՀ կառավարության 09.05.2009 թվականի թիվ 562-Ն որոշմամբ նախատեսված ընթացակարգին համապատասխան գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններից, ինչպես նաև նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներից հավաքագրվել են մարզպետների 2011 թվականի գործունեության արդյունքների գնահատականները, որոնք այնուհետև ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Գործընթացի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով 2012թ. ՀՀ կառավարության թիվ 562-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացում, որի արդյունքում մարզպետներին գնահատող մարմինների ցանկում ավելացել է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխություն է կատարվել նաև ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. դեկտեմբերի 20-ի թիվ 07-Ն հրամանում, որը ստացել է պետական գրանցում:

1.9 Մարզխորհրդի նիստեր

Նախարարության կողմից հսկողություն է իրականացվել մարզխորհուրդների նիստերի կազմակերպման և նիստերի ընթացքում խնդրահարույց հարցերի պարտադիր քննարկման նկատմամբ: Մասնավորապես՝ անհրաժեշտության դեպքում առաջարկություններ են ներկայացվել կայանալիք նիստի օրակարգում հրատապ հարցեր ներգրավելու ուղղությամբ:

Նախարարության աշխատակիցները պարտադիր մասնակցել են բոլոր նիստերին և արդյունքների վերաբերյալ ներկայացրել են զեկուցագրեր:

1.10 Գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքներ

Համայնքներում գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը: Մշակվել է համապատասխան կարգ, որում նկարագրվել են մրցույթին մասնակցելու և հաղթելու ընթացակարգերը: Մրցանակաբաշխության համար հայտարարված մրցույթի արդյունքներն ամփոփելու նպատակով մրցութային հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ: Քննարկումների ժամանակ Հանձնաժողովը համայնքների ընտրությունը կատարել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ինտերնետային էջում տեղադրված մրցույթին մասնակցելու իրավունք ունեցող համայնքների ցանկից և, ամփոփելով համայնքների ներկայացրած տեղեկատվությունը, սույն թվականի ապրիլի 2-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կայացած Հանձնաժողովի նիստի ժամանակ որոշել է «Լավագույն քաղաքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող ճանաչել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքային համայնքի ղեկավար պարոն Գ. Մուրադյանին: «Լավագույն գյուղապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգերում համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցության ցուցանիշով հաղթող ճանաչել ՀՀ Լոռու մարզի Մեծավան գյուղական համայնքի ղեկավար Ս. Վարդանյանին:

Նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում համակարգել է համայնքներում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող ծրագրերը՝ միևնույն համայնքում միանման ծրագրի իրականացումը բացառելու նպատակով: Առկա են եղել նաև համատեղ իրականացված ծրագրեր, մասնավորապես Ասիական զարգացման բանկի և «Կովկասի ինստիտուտ հիմնադրամի» հետ համատեղ մշակվում է Համայնքներում գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեթոդական ուղեցույց: Ծրագրի արդյունքում մեթոդական ուղեցույցի հետ համատեղ ակնկալվում է նաև 4 մարզերի (Արագածոտն, Գեղարքունիք, Կոտայք, Տավուշ) 50 համայնքներում գենդերային հարցերի ներառում զարգացման ծրագրերում և նախագծերում: Կարողությունների զարգացման նպատակով իրականացվում է նաև համայնքային ծառայողների վերապատրաստում:

Եվրոպական միության և Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի հետ համատեղ իրականացվել է «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանում Հայաստանում. Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագիրը, որի նպատակն է աջակցել Հայաստանում տեղական մակարդակում գենդերային հավասարության խթանմանը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների օրինակելի կանոնդրությունը, որը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով:

1.11 Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացված աշխատանքներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից երեխաների իրավունքների պաշտպանության նոր ռազմավարություն մշակելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասնակցությամբ տեղի են ունեցել քննարկումներ, որոնց ժամանակ նախարարության կողմից ներկայացվել են համապատասխան առաջարկություններ. դրանք տեղ են գտել նոր ռազմավարությունում:

Նախարարության կողմից մշակվել է նաև խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների օրինակելի աշխատակարգ, որը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 26.09.2012թ թիվ 115-Ա հրամանով: Աշխատակարգով նախատեսվում է կանոնակարգել վերջիններիս գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարությունը սերտ համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում գործող միջազգային կառույցների հետ՝ մասնավորապես UNICEF, Save the children, World Vision և այլն:

1.12 Ինտեգրված սոցիալական ծառայություններ

Նախարարության կողմից որոշակի աջակցություն է ցուցաբերվել սոցիալական ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ձևավորման գործընթացին, մասնավորապես, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքային իրավունքների վերաբերյալ տեղեկատվական բազան արդիականացնելու նպատակով վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա համայնքների ղեկավարների միջոցով հավաքագրվել են քաղաքացիների անձնագրային և այլ տվյալներ ու ներկայացվել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Նախարարության, UNICEF-ի և Համայնքների ֆինանսիստների միավորման համագործակցության արդյունքում մշակվել է ՀՀ տարածքային սոցիալական պլանավորման հայեցակարգը, որի հիման վրա մշակվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի թիվ 180-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 124-Ա/1 համատեղ հրամանով հաստատվել է «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի շրջանակում համայնքի սոցիալական կարիքների գնահատման, դրա հիման վրա սոցիալական ծրագրերի մշակման ուղեցույցը հաստատելու մասին» մեթոդական ուղեցույցը:

Հաշվետու ժամանակահատվածում World Vision կազմակերպության հետ համագործակցության արդյունքում իրականացվել են հանրապետության թվով 6 մարզերի 170 համայնքների շուրջ 160 սոցիալական աշխատողների վերապատրաստման աշխատանքներ:

Աջակցություն է ցուցաբերվել նաև ինտեգրված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ շենքային պայմանների տրամադրման գործընթացին:

1.13 Մարզպետարաններում և համայնքներում ներքին աուդիտի ստորաբաժանման ստեղծում

Նախարարության կողմից իրականացվել է մարզային ենթակայությամբ ՓԲԸ-ների վերստուգիչների պահպանման համար անհրաժեշտ միջոցների հաշվարկ, միաժամանակ վերլուծվել է նաև վերջիններիս կողմից իրականացվող գործառույթների շրջանակը: Արդյունքում առաջարկվել է կրճատել ՓԲԸ-ներում առկա վերստուգիչների հաստիքները՝ դրանց փոխարեն ուժեղացնելով մարզպետարանների աշխատակազմերում ներքին աուդիտի ստորաբաժանման կարողությունները: Առաջարկությունն ընդունվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և իրականացվել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Միաժամանակ նախարարության կողմից օրենսդրական առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարություն մարզպետարանների աշխատակազմերում ներքին աուդիտի ստորաբաժանման ստեղծման վերաբերյալ, սահմանվել է նաև հսկողություն օրենսդրորեն նախատեսված գործառույթների իրականացման նկատմամբ:

Նախարարությունը համակարգել է ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման N 3 հավելվածով նախատեսված ժամկետում (01.01.2013թ.) ՀՀ քաղաքային համայնքներում ներքին աուդիտի համակարգի ներդրման աշխատանքների իրականացումը, որի արդյունքում թվով 41 քաղաքային համայնքներում ստեղծվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով ներքին աուդիտի ստորաբաժանումներին ներկայացվող հիմնական պահանջներին համապատասխանող բաժիններ: Թվով 4 քաղաքային համայնքներում ներքին աուդիտի ստորաբաժանումների ստեղծման աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ Դաստակերտի, Ախթալայի, Թումանյանի և Շամլուղի քաղաքային համայնքներում ներքին աուդիտի ստորաբաժանումներ չեն նախատեսվում, ինչը ենթադրում է, որ այդ համայնքներում ներքին աուդիտի գործառույթները կարող են իրականացվել այլ համայնքի կամ տվյալ մարզպետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1 Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման բարելավման և կատարելագործման առումով 2012թ. իրականացված միջոցառումներ

- Տարեսկզբին իրականացվել է 2012թ. համայնքային բյուջեների եկամուտների պլանային ցուցանիշների (մասնավորապես գույքահարկի, հողի հարկի, տեղական ու պետական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների) մանրակրկիտ վերլուծություն, որի արդյունքում բազմաթիվ (մոտ 450) համայնքներում ավագանիների կողմից վերանայվել են իրենց բյուջեները և հաստատվել ավելի իրատեսական բյուջեներ: Ինչպես 2012թ., այնպես էլ 2013թ. համայնքների բյուջեները օրենսդրությամբ սահմանված ժամկետում հաստատվել են:
- ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի հետ համատեղ մշակել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի, օբյեկտիվ կարիքների ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, մշակվել է ծախսային կառուցվածքների տիպաբանություն: ՏԻՄ-երի ծախսային քաղաքականության մեթոդաբանության մշակման համար նախ՝ ՀՀ համայնքները դասակարգվել են առանձին խմբերի՝ հաշվի առնելով համայնքի բնակչության թիվը, համայնքի հատուկ կարգավիճակը՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ (լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ, բազմաբնակավայր և այլն), ՏԻՄ-երի կողմից փաստացի իրականացվող լիազորությունների (պետության կողմից պատվիրակված, պարտադիր, կամավոր) թիվը, համայնքային ենթակայության ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, համայնքի աշխատակազմի թվաքանակը, համայնքի բյուջետային կարողությունները (ընդհանուր մուտքերի և/կամ ելքերի չափը), համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի (կամ ընթացիկ և կապիտալ) ծախսերի հարաբերակցությունը և այլ չափորոշիչներ: Այնուհետև մշակվել է ծախսային քաղաքականության մեթոդաբանություն՝ ըստ առանձին խմբերի: Սույն մեթոդաբանությունը հնարավորություն կընձեռի ՏԻՄ-երին՝ հեշտությամբ իրենց համայնքը համապատասխանեցնելու համայնքների խմբերից մեկին և դրան համապատասխան՝ մշակելու և իրականացնելու իրենց ծախսային քաղաքականությունը. այն ուղեցույց կհանդիսանա ՏԻՄ-ի համար, ծախսային քաղաքականության միասնականություն կապահովի դասակարգված համայնքների խմբերի մեջ և համայնքային բյուջեների կազմման ժամանակ կհանդիսանա խորհրդատվական և կողմնորոշիչ բազա:

  21.12.2012թ. տեղի է ունեցել մեթոդաբանության հանրային քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Մեթոդաբանությունը տեղադրված է նաև ՀՀ ՏԿՆ պաշտոնական կայքում՝ հանրային քննարկման նպատակով:
- Իրականացվել է համայնքային բյուջե մուտքագրվող պետական տուրքերի ուսումնասիրություններ ըստ կառուցվածքի՝ ՔԿԱԳ գործունեության մասով և նոտարական գործունեության մասով: Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ 2011թ. առաջին կիսամյակի համեմատությամբ 2012թ. առաջին կիսամյակի ցուցանիշները պետական տուրքերի մասով զգալիորեն նվազել են՝ 2011թ. 382 մլն. դրամի դիմաց 2012թ.-ին կազմելով 333 մլն. դրամ (տարբերությունը՝ 49 մլն. դրամ): Պետական տուրքերը ՔԿԱԳ մասով նվազել են 1,799,000 հազ. դրամով, նոտարական գործողությունների մասով՝ 48,101,700 հազ. դրամով::

  2011թ. հունիսի 23-ին ընդունվել էր «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի մի շարք պայմանագրեր նոտարական վավերացում չեն պահանջում: 2012թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, համաձայն որի անշարժ գույքի բաժանման պայմանագիրը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը, բնակելի տարածության օգտագործման իրավունքի պայմանագիրը, ցմահ ռենտայի պայմանագիրը, անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը (փոխատվության պայմանագիր), հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը, մշտական ռենտայի պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը, շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը, անշարժ գույքի միավորման պայմանագիրը, անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը, բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը, անշարժ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը, կամավոր սերվիտուտի պայմանագիրը, անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագիրը, անշարժ գույքի վաճառքի և գրավի (հիփոթեքի) եռակողմ պայմանագիրը, անշարժ գույքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը նոտարական վավերացում չեն պահանջում, որի արդյունքում նոտարական գործողությունների մասով պետական տուրքերը էականորեն

նվազել են: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվության՝ 2012թ. 1-ին կիսամյակում նոտարական համակարգում վավերացվել է 231,218 գործ՝ 2011թ. 1-ին կիսամյակի 243,506-ի դիմաց, գանձված պետական տուրքը կազմել է 248.4 մլն. դրամ 2011-ի 296,5 մլն-ի դիմաց: Մեկ գործարքի հաշվով գանձված պետական տուրքը կազմել է 1.07 հազ. դրամ՝ 2011-ի 1.22-ի դիմաց: Տարեկան կտրվածքով պետական տուրքերը 2011թ. համեմատությամբ նվազել են 76,612 հազ. դրամով՝ 2011թ. 791,748 հազ.դրամի դիմաց կազմելով 715,135 հազ. դրամ:

- Իրականացվել է տեղական տուրքերի վերլուծություն: ՀՀ փոխվարչապետի հանձնարարությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերի համայնքներում 2012թ. տեղական տուրքերի ցուցանիշների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազման պատճառները ուսումնասիրելու նպատակով: Աշխատանքային խմբի կողմից վեր են հանվել ռիսկային համայնքները, հանձնարարական է ուղարկվել համապատասխան մարզպետներին ռիսկային համայնքների վերաբերյալ և ստացվել մարզպետարանների պարզաբանումները ցածր ցուցանիշների պատճառների մասին, ինչպես նաև տեղերում կատարվել են ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղական տուրքերի նվազման հիմնական պատճառները պայմանավորված են եղել վարչարարության խնդիրներով: Տարվա ընթացքում նախարարության կողմից իրականացվող պարբերական մոնիթորինգի արդյունքում տեղական տուրքերի 2012թ. փաստացի հավաքագրման ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 477,315 հազար դրամով:
- Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական տուրքերի և վճարների» հայեցակարգը: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ գործող օրենքում հստակեցված չեն «տեղական տուրք» և «տեղական վճար» հասկացությունները, որը տարակարծությունների տեղիք է տալիս: «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներում նշված չեն տեղական տուրքեր և վճարներ վճարողների գրանցման և հաշվառման մասին դրույթներ: Առկա են հակասություններ և անհամապատասխանություններ ոլորտի իրավական ակտերում: Բացի այդ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ գործող օրենքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, ընդունվել են այլ օրենքներ (մասնավորապես «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքները): Տեղական տուրքերի ու վճարների տեսակների և դրանց դրույքաչափերի սահմանման միասնական սկզբունքների ու մոտեցումների բացակայությունը որոշակի անորոշություններ է ստեղծել այդ օրենսդրական դաշտում, որոնց ճշգրտմանը, տեղական տուրքերի ու վճարների ցանկի հստակեցմանը, ինչպես նաև նոր տեսակների սահմանմանն է ուղղված սույն հայեցակարգը: Հայեցակարգի դրույթների հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» նոր օրենքի նախագծի փաթեթը: Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է համայնքների բյուջեների եկամուտների ավելացում, որը պայմանավորված է տեղական տուրքերի և վճարների նոր տեսակների սահմանմամբ: Մասնավորապես, որպես նոր տեղական վճարներ առաջարկվում են համայնքի վարչական տարածքում՝ կենտրոնացված ջեռուցման, ջրմուղ-կոյուղու, ոռոգման, համայնքի բնակավայրերից դուրս գտնվող հանրային հանգստի վայրերից օգտվելու, մշակույթի հուշարձանների և թանգարանների մուտքի, համայնքի առանձին տարածքներում երթևեկելու՝ վճարովի փողոցի կամ կամրջի համար նախատեսվող վճարները: Որպես տեղական տուրքերի նոր տեսակներ են առաջարկվում երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվության, որսորդության և ձկնորսության թույլտվության, համայնքի ղեկավարի կողմից կտակի վավերացման տուրքերը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար, համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու, աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ ստանալու լիազորագրերի հաստատման, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար, համայնքի վարչական տարածքում գործող կազմակերպությունների կողմից համայնքի խորհրդանիշերի (զինանշան, դրոշ) օգտագործման համար նախատեսվող տուրքերը:
- Իրականացվել է պարբերական մոնիթորինգ համայնքների կողմից կուտակած աշխատավարձի գծով պարտքերի մարման գործընթացի նկատմամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաև ընթացիկ աշխատավարձերի ժամանակին վճարման, լրացուցիչ պարտքեր չկուտակելու վրա:

Աշխատավարձերի նախկին տարիների կուտակած պարտքերի մարման մասով արձանագրվել է հետևյալ արդյունքը. 2008թ. հունվարի 1-ի դրությամբ ձևակերպված շուրջ 2.3 մլրդ.դրամ պարտքերից 2013թ. հունվարի 1-ի դրությամբ առկա է մոտ 90,2 մլն.դրամ պարտք: 2012թ. ընթացքում պարտքի մարում է կատարվել 75,493 հազ. դրամի չափով:



2.2 Համայնքային բյուջեների եկամուտների ցուցանիշներ

2012թ. ՀՀ համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 106.6 մլրդ. դրամի դիմաց կազմել են 95.4 մլրդ դրամ, (կատարողականը՝ 89.5%): 2011 թվականի համեմատությամբ ընդամենը եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 9.1%-ով կամ 7.9 մլրդ դրամով:

Սեփական եկամուտները կազմել են ընդամենը եկամուտների 29.7%-ը: Սեփական եկամուտները նախատեսված 32.5 մլրդ դրամի դիմաց փաստացի կազմել են 28.4 մլրդ դրամ (կատարողականը՝ 87.3%): 2011 թվականի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 13.6%-ով կամ 3.4 մլրդ դրամով:

Հողի հարկի հավաքագրումը կատարվել է 88.9%-ով: Նախատեսված 4.7 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4.2 մլրդ դրամ: 2011 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը նվազել է 5%-ով կամ 223,449 հազար դրամով:

Գույքահարկի հավաքագրումը կատարվել է 92.7%-ով: Նախատեսված 13.03 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 12.08 մլրդ դրամ: 2011 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 2.5%-ով կամ 295,440 հազար դրամով:

Տեղական տուրքերի հավաքագրումը կատարվել է 105.1%-ով: Նախատեսված 2.87 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3.02 մլրդ դրամ: 2011 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 18.8%-ով կամ 477,315 հազար դրամով:

Պետական տուրքերի հավաքագրումը կատարվել է 89.6%-ով: Նախատեսված 798,583 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 715,135 հազար դրամ: 2011թ. համեմատությամբ պետական տուրքերի հավաքագրման ցուցանիշը նվազել է 9.7%-ով, կամ 76,612 հազար դրամով:

Գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրումը կատարվել է 86.6%-ով: Նախատեսված 3.5 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3.05 մլրդ դրամ: 2011թ. համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 19.2%-ով կամ 491,585 հազար դրամով:


120 000 000
100 000 000
80 000 000
60 000 000
40 000 000
20 000 000
0
Ընդամենը եկամուտներ
Սեփական եկամուտներ
/3,477,562/
/8,430,157/
/31,232,316/
/3,660,620/
/7,930,127/
40 692 660
44 170 222
52 600 379
83 832 695
87 493 315
95 423 442
/1,194,385/
/3,150,130/
/2,140,111/
/1,169,823/
/3,401,635/
17 342 862
18 537 247
21 687 377
23 827 488
24 997 311
28 398 946
2007թ.
2008թ.
2009թ.
2010թ.
2011թ.
2012թ.


30 000 000
25 000 000
20 000 000
15 000 000
10 000 000
5 000 000
0
Սեփական եկամուտներ
Հարկային եկամուտներ (հողի հարկ+գույքահարկ)
Տուրքեր (պետական տուրքեր+ տեղական տուրքեր)
Գույքի վարձակալությունից եկամուտներ
17 342 862
18 537 247
21 687 377
23 827 488
24 997 311
28 398 946
/1,194,385/
/3,150,130/
/2,140,111/
/1,169,823/
/3,401,635/
10 744 373
11 628 014
15 216 517
15 842 052
16 227 738
16 299 729
/883,641/
/3,588,503/
/625,535/
/385,686/
/71,991/
2 060 147
2 218 551
2 343 531
3 078 113
3 335 395
3 736 098
/158,404/
/124,980/
/734,582/
/257,282/
/400,703/
1 922 646
1 917 669
1 905 852
2 150 234
2 563 687
3 055 272
/-4,977/
/-11,817/
/224,382/
/413,453/
/491,585/
2007թ.
2008թ.
2009թ.
2010թ.
2011թ.
2012թ.

2.3. Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացում

Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով փոփոխություններ են նախատեսվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագծում: «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների չափը ըստ առանձին համայնքների բյուջեների՝ հաշվարկվում է՝ վերջիններս տարանջատելով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների և 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների: Արդյունքում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքները (շուրջ 200 համայնք) ստանում են հավասարաչափ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով: Միևնույն ժամանակ հանրապետության 33 համայնքներում, որոնք ունեն 300-ից ավելի բնակչություն, 2012թ. համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը պակաս է 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանված գումարից: Նշված խնդիրները կարգավորելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2.4. Համայնքների համար գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական միասնական բանկի ստեղծում

- Պայմանավորված «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի ընդունմամբ ՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ իրականացնելու հողի հարկի և գույքահարկի շտեմարաններում, ինչպես նաև միասնական տեղեկատվական համակարգում: «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից մշակվել է բարեփոխված ծրագրային փաթեթ, որը ներդրվել է ՀՀ համայնքներում, ինչպես նաև մարզպետարաններում: Նախատեսվում է վերջինս ներդնել նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում՝ արդյունքում ձևավորելով միասնական տեղեկատվական համակարգ:
- 2012թ. ընթացքում շարունակվել է մի շարք համայնքների կողմից հողի հարկի և գույքահարկի բազաները միասնական վարելու հաջող փորձը: ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի համայնքների միության» հաջող փորձը 2012 թվականին ներդրվել է նաև ՀՀ Տավուշի մարզում: Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի համայնքային միություններում ներդրվել է համապատասխան ծրագրային փաթեթը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր համայնքին դիտման ռեժիմով տիրապետելու շտեմարանում առկա ցուցանիշներին:

2.5. Տեղական ինքնակառավարման մարմիններում հարկային վարչարարության /հողի հարկ, գույքահարկ/ հետ կապված գործընթացներ

- 2012թ. մարտի 21-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Հողի հարկի և գույքահարկի գծով

առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթը:

Փաթեթը բովանդակային առումով երեք մասից է բաղկացած: Առաջինը վերաբերում է մինչև 2008թ-ը հողի հարկի և գույքահարկի գծով կուտակված ապառքներին: Ապառքների ճնշող մասը ձևավորվել է 1996թ-ից սկսած մինչև 2003-2004 թվականները, ընդ որում՝ առաջին տարիներին վարչարարությամբ համայնքները չէին զբաղվում, բայց ապառքները հետագայում փոխանցվել և արտացոլվել են համայնքային բյուջեներում: Փաթեթով ոչ թե արտոնություն է սահմանվում կամ հարկային համաներում իրականացվում, այլ բազաներից

հանվում են անհուսալի ապառքները. ինչու անհուսալի, որովհետեւ փաթեթի ընդունման պահին գործող օրենսդրությամբ նախատեսված էր դատական հայցերի երեք տարվա վաղեմության ժամկետ: Այսինքն՝ 2012թ. հունվարի 1-ից սկսած՝ յուրաքանչյուր համայնքի ղեկավար, ով կցանկանար օրինական, իրավական ճանապարհով գանձել մինչև 2008թ. կուտակված ապառքները, դրա հնարավորությունը չէր ունենալու: Արդյունքում կանխվեցին այն դեպքերը, երբ գանձումներն իրականացվում էին ոչ օրինական, շատ դեպքերում՝ ոչ պաշտոնական ճանապարհով՝ դրանով կախվածության մեջ դնելով սովորական քաղաքացուն համայնքային տարբեր կառույցներից եւ սահմանափակելով այդ կառույցների ծառայություններից օգտվելու նրա հնարավորությունները: Միևնույն ժամանակ ապառքների զրոյացումը հնարավորություն կտա համայնքներին ավելի ճշգրիտ կանխատեսումներ կատարելու և իրատեսական բյուջեներ կազմելու:

Փաթեթի առաջին մասով կառավարությունն առաջարկել է կարգավորել անհուսալի գումարների խնդիրը: Երկրորդ մասով նախատեսվում են որոշակի արտոնություններ 2008-2012թթ. համար այն նույն ձեւաչափով, ինչ մենք երկու անգամ իրականացրել ենք՝ 2009 եւ 2010 թվականներին "Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին" օրենքով. այսինքն, եթե այդ տարիների ընթացքում քաղաքացիները չեն կարողացել կատարել հարկային պարտավորությունները, ապա կարող են վճարել հարկերի մայր գումարը՝ ազատվելով տույժ-տուգանքների վճարումից: Իսկ որպեսզի չխախտվի արդարության սկզբունքն այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր նշված տարիներին նաև վճարել են տույժ-տուգանքները, ապա դրանք կհաշվանցվեն որպես ապագա հարկային վճարներ: Ի տարբերություն 2009 և 2010 թվականների նախաձեռնությունների՝ սա վերաբերում է ինչպես հողի հարկին, այնպես էլ գույքահարկին: Այսպես, **օրենքի կիրարկման արդյունքում 01.01.2013թ. դրությամբ հողի հարկի մասով համայնքային բյուջե է մուտքագրվել 509,208 հազ. դրամ, արտոնված տույժերի և տուգանքների գումարը կազմում է 304,667 հազ. դրամ: Օրենքով սահմանված արտոնությունից օգտված քաղաքացիների թիվը կազմում է 62,706 մարդ: Գույքահարկի մասով՝ համայնքային բյուջե է մուտքագրվել 462,985 հազ. դրամ, արտոնված տույժերի և տուգանքների գումարը կազմում է 324,226 հազ. դրամ: Օրենքով սահմանված արտոնությունից օգտված քաղաքացիների թիվը կազմում է 47,768 մարդ:**

Փոփոխությունների երրորդ բովանդակային մասը վերաբերում է տեղական հարկային վարչարարության բարելավմանը: Մասնավորապես տեղական հարկերի մասով դատական հայցերի վաղեմության ժամկետը սահմանվել է տասը տարի: Սա նշանակում է, որ համայնքի ղեկավարը հարկային պարտավորություն առաջանալու պահից տասը տարվա ընթացքում կարող է իրավական ճանապարհով քաղաքացուց գանձել տեղական հարկերը: Հաշվի առնելով, որ համայնքներում կարող է լինել բնակչության մի հատված, որը սոցիալական պայմաններից ելնելով չի կարողանում կատարել հարկային պարտավորությունները, օրենսդրական փաթեթով սահմանվել է, որ համայնքի ավագանին կարող է հողի հարկի տարեկան բյուջեի տասը տոկոսի չափով արտոնություններ սահմանել: Այս դրույթը նախկինում գործել է միայն գույքահարկի մասով: Այս կերպ ՏԻՄ-երին ոչ միայն հարկային, այլև հասցեական սոցիալական քաղաքականություն իրականացնելու իրական օրենսդրական հնարավորություն է տրվել:

- Համայնքների ղեկավարների կողմից դատարան դիմելու գործընթացը կարգավորելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել նախագծերի փաթեթ, որը հնարավորություն է տալու ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը համայնքի ղեկավարի վարչական ակտի հիման վրա, առանց դատարանի որոշման, իրականացնել համապատասխան գործողություններ: Սույն փաթեթը քննարկվել է 27.12.2012թ. մշտապես գործող պետահիրավական նախարարական կոմիտեի նիստում:

2.6. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակի ընդհանուր բնութագրին առնչվող օրենսդրական դաշտի գնահատում և ուսումնասիրություն

Հաշվետու տարվա ընթացքում ուսումնասիրվել է օրենսդրական դաշտը (հաշվի առնելով միջազգային փորձը) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տարանջատման տեսանկյունից, գնահատվել այդ լիազորությունների ընդհանուր բնութագիրը և ըստ արդյունքների՝ ՀՀ կառավարություն է ներկայացվել առաջարկությունների փաթեթ, որն առնչվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակեցմանը և տարանջատմանը:

Փաթեթում, բացի տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններից, բյուջետային ընդհանուր ծախսերում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման ծախսային վերլուծություններից, ընդհանուր դիտարկումներից, եզրակացություններից և առաջարկություններից, 2009-2012 թթ. տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների

մասով կատարված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունից, հավելվածների տեսքով ներկայացված են.

- ՀՀ պետական կառավարման և ՏԻՄ-երի միջև հանրային կառավարման լիազորությունների բաշխումը, այդ լիազորությունների տեսակները և իրականացման ձևերը՝ Եվրամիության երկրներում ընդունված ձևաչափով: Վերջինիս համեմատությունը եվրոպական երկրների համապատասխան տվյալների հետ թույլ է տալիս նկարագրել այն բնագավառները, որոնցում Հայաստանն ապակենտրոնացման մակարդակով նկատելիորեն զիջում է այդ երկրներին.

- համայնքի ղեկավարի լիազորությունների ցանկը՝ ըստ բնագավառների.

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքի ավագանու և ղեկավարի ընդհանուր իրավասությունների ամբողջական ցանկը:

Հիմնվելով ՏԻՄ-երի իրավասությունների ու լիազորությունների ընդհանուր պատկերի վերաբերյալ ներկայացված նկարագրության, վերլուծության արդյունքների և եզրակացությունների վրա՝ առաջարկվել է ծրագրավորել և իրականացնել կոնկրետ միջոցառումներ, մասնավորապես՝

- Բացահայտված օրենսդրական հակասությունների ու թերությունների հաշվի առնմամբ՝ մշակել և սահմանված կարգով շրջանառության մեջ դնել օրենսդրական փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, կամ, որն ավելի նախընտրելի տարբերակ է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը շարադրել նոր խմբագրությամբ (ինչը նախատեսված է նաև «Եվրոպայի խորհուրդ – Հայաստանի Հանրապետության կառավարություն» Գործողությունների Պլանով):

- Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների կատարման նկատմամբ ներքին և արտաքին արդյունավետ վերահսկողության իրականացման նպատակով հստակեցնել համայնքի ղեկավար – մարզպետ - հանրապետական մարմիններ հարաբերությունները, ներդնել համայնքի ղեկավարի աշխատանքի արդյունավետությունից կախված աշխատանքի գնահատման գործուն իրավական մեխանիզմներ:

- Համայնքներին օրենքով համապատասխան ֆինանսական աղբյուրները և միջոցների ծավալները ամրագրելիս ելնել համայնքների գնահատված կարիքներից, ինչպես նաև պետությանը և ՏԻՄ-երին սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման գծով համապետական բյուջետային ծախսային առաջնահերթություններից և ֆինանսական հնարավորություններից:

- Վարչատարածքային բարեփոխումների իրականացում, համայնքների խոշորացմանն ուղղված գործնական քայլերի իրականացում: Աջակցություն միջհամայնքային միավորումների ստեղծմանը, միջհամայնքային համագործակցության խրախուսում:

- Բարելավել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները՝ տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը:

Վերը նշված առաջարկությունները համահունչ են նաև ՀՀ կառավարության ծրագրերին, գերակայություն են առաջիկա տարիների համար և հիմնականում ընդգրկվել են Եվրոպայի Խորհրդի հետ համակարգված ու շարունակական քննարկումների արդյունքում ձևավորված գործողությունների ծրագրում: Այս փաստաթղթում, որը մշակվել է ինչպես կառավարության աշխատակազմի, համապատասխան նախարարությունների, այնպես էլ ՀՀ նախագահի աշխատակազմի, ՀՀ ԱԺ աշխատակազմի, համապատասխան մշտական հանձնաժողովների, Անվտանգության Խորհրդի աշխատակազմի, հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության արդյունքում, ընդգրկված են այն հիմնական ուղղությունները, անհրաժեշտ և լուծում պահանջող խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումները, որոնց իրականացումը կապահովի տեղական ժողովրդավարության հետագա ամրապնդումը, ապակենտրոնացման գործընթացների խորացումը և, վերջին հաշվով, տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը:

ՀՀ կառավարության կողմից հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին հանձնարարվել է ներկայացված փաթեթում նշված խնդիրները ներառել համապատասխան գերատեսչությունների գերակա խնդիրներում:

2.7. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով) իրականացման գործընթացի ուսումնասիրություն

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրականացվել է ՀՀ մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով) ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ ՀՀ

համայնքների մեծ մասում գործընթացը իրականացվում է ցածր մակարդակով կամ ընդհանրապես չի իրականացվում, ինչը պայմանավորված է վարչատարածքային, ֆինանսական և այլ խնդիրներով: Կատարվել են ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնք միտված են բացահայտելու աղբահանության և նախադպրոցական կրթության բնագավառներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման հետ կապված խնդիրները և բացթողումները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման գործընթացում առկա խնդիրները և բացթողումները պարզելու նպատակով ուսումնասիրվել է Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման օրենսդրական շրջանակները, ինստիտուցիոնալ կառուցվածքը, աղբավայրերի և թափոնների տեղադրման վայրերի ստեղծման և շահագործման ընթացակարգը, ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ուսումասիրությունների արդյունքները և համակարգի բարեփոխմանն ուղղված քայլերը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, բնագավառի ուսումնասիրության արդյունքները ամփոփելով, ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության և սանիտարական մաքրման, նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով) իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների մասին» արձանագրային որոշման նախագիծը:

Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 08.11.2012 նիստում ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ուսումասիրությունների արդյունքներն ընդունվել են ի գիտություն և թիվ 01/24.9/[135684]-12 արձանագրության 9-րդ կետով հանձնարարվել է վեց ամսյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել խնդրի լուծման վերաբերյալ առաջարկություններ, որտեղ հստակ նկարագրված կլինեն մարմինների պատասխանատվության շրջանակները: Գործընթացը քննարկման փուլում է:

Հայաստանի Հանրապետությունում կոշտ թափոնների կառավարման բնագավառի բարելավման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ և մասնակցում նրանց կողմից իրականացվող ծրագրերին, մասնավորապես՝

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ (KfW) սկսած «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարում» ծրագրին (դրամաշնորհային), որի «Խորհրդատվական պայմանագրով» նախատեսված Գործատուի պարտավորությունները իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Նշված ծրագրի ավարտին Խորհրդատուն պարտավորվել է ներկայացնել բիզնես ծրագիր՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի և հարակից համայնքների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման, նոր աղբավայրի կառուցման, դրանց նախահաշվային արժեքների վերաբերյալ, ինչպես նաև նոր աղբավայրի տեղադիրքի առաջարկություն կատարել:
- Հաշվի առնելով նշված ծրագրի շրջանակներում կայացած աշխատանքային հանդիպումների ընթացքում լիազոր մարմինների ներկայացուցիչների կարծիքները՝ ՀՀ տարածքում աղբահանության ոլորտի բարելավման ուղղությամբ լոկալ ծրագրեր իրականացնելու ոչ նպատակահարմար լինելու մասին, ՀՀ տարածքային կառավարման նախարարության առաջարկությամբ և քննարկումների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման ներդրումային» ծրագրի (դրամաշնորհային) շրջանակներում մշակել ՀՀ ամբողջ տարածքի կոշտ թափոնների կառավարման ռազմավարությունը՝ օգտագործելով միջազգային փորձը, ինչպես նաև ՀՀ տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված և իրականացվող ծրագրերի արդյունքները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը՝ կարևորելով ոլորտի զարգացումը, նշված երկու ծրագրերի նախապատրաստման տեխնիկական առաջադրանքներում էլ առաջարկել է ծրագրի ավարտին ներկայացնել բիզնես առաջարկներ՝ հետագայում վարկեր ներգրավելու նպատակով:

Նախադպրոցական կրթության մասով գործունության գործընթացը ՀՀ համայնքների մեծ մասում իրականացվում է ցածր մակարդակով և ոչ բոլոր համայնքներում է իրականացվում ներկայացվող պահանջներին համապատասխան: Համայնքների զգալի մասի եկամուտները սահմանափակ են, որը չի բավարարում նույնիսկ առօրյա կարիքների համար: Հատկապես հեռավոր գյուղական բնակավայրերում բավարար չեն շենքային, ջեռուցման պայմանները: Այդ պատճառով մանկապարտեզներից շատերն ունեն սեզոնային բնույթ: Բավարար չեն նաև նյութատեխնիկական և ուսումնամեթոբանական բազաները, ինչը հնարավորություն չի տալիս բավարարելու նախադպրոցական կրթության աճող պահանջարկը:

Նախադպրոցական կրթության կազմակերպումը կախված է յուրաքանչյուր համայնքի հնարավորություններից և կարիքներից: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը գտնվում է նախարարության մշտական ուշադրության ներքո: Մարզպետարանների հետ համատեղ պարբերաբար հսկողություն է իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի վրա:

2.8 Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության օրենսդրական ապահովմանն ուղղված միջոցառումներ

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նպատակ ունի բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, ինչպես նաև օրենսդրորեն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Այն փաստից հետո, երբ 2010թ. մարտի 18-ին Ուտրեխտ քաղաքում Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվեց Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի «Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ» լրացուցիչ արձանագրությունը՝ նման օրենքի մշակումը դարձավ արդիական և հրատապ:

Նախագծով ամրագրվում է տեղական ինքնակառավարման նոր սկզբունք՝ «տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը», տրվում է «տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցություն» հասկացության սահմանումը, սահմանվում է, որ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքի բնակիչները (գործող օրենքով այդ իրավունքն ունեն համայնքի ղեկավարը և ավագանին), ավագանուն վերապահվում են նոր իրավասություն՝ «կատարելու համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ», ինչպես նաև նոր պարտականություններ՝ «ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցելու ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցելու դրա նիստերին, օժանդակելու համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը», նախատեսվում է համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման նոր հիմք՝ մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով ավագանու մշտական հանձնաժողովի նիստերի ավելի քան կեսից բացակայելը, նախատեսվում է օրենքը լրացնել նոր 33.1-ին հոդվածով, որտեղ նկարագրվում է համայնքի ղեկավարի գործունեությունը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում, նախատեսվում է օրենքը լրացնել նոր 54.1-ին հոդվածով, որտեղ նկարագրվում են համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցության առանձնահատկությունները՝ պահպանելով նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները:

2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով միջոցառումների ծրագրով նախատեսվում է կազմակերպել կլոր սեղան՝ նվիրված տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության հիմնախնդիրներին, որին նախատեսվում է հրավիրել նաև ԵԽ-ի փորձագետներին:

2.9. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում համայնքներում

2012 թվականի ընթացքում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է ևս 98 համայնքապետարաններում: Ընդհանուր առմամբ, տեղեկատվական համակարգը ներկայումս շահագործվում է ՀՀ 339 համայնքներում: Տարվա ընթացքում թվով 115 ՏԻՄ-երում աշխատանքներ են տարվել էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում 37 քաղաքապետարաններում և 78 գյուղապետարաններում շահագործվող ՀԿՏՀ-ներն իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ:

2.10. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունների պարզեցում, հստակեցում և գործող ընթացակարգերի բարելավում

ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների կողմից ՏԻՄ-գործարար հարաբերությունների բարելավման համար վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնց համար իրականացվել են հետևյալ գործառույթները՝

1. Վերլուծվել է գործող տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրությունը, որի արդյունքում պայմանականորեն դասակարգվել են տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար շփումներն ըստ 4 տեսակների (թույլտվություններ, համաձայնեցումներ, կառավարչական որոշումներ, հաշվետվություններ-տեղեկանքներ), ինչպես նաև ըստ ոլորտների (քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների), վեր են հանվել ՀՀ օրենսդրության այն դրույթները, որոնց կատարելագործումը կարող է նվազեցնել տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնը:

2. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՏԻՄ - գործարար հարաբերությունները կարգավորվում են տարբեր ոլորտների օրենսդրությամբ՝ նպատակահարմար է գտնվել, որ այդ ոլորտների լիազոր պետական մարմինները ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ ներգրավվեն օրենսդրության վերլուծության և դրա բարեփոխման գործընթացի մեջ: Այդ նպատակի համար մշակվել է հարցաշար: Հարցաշարում ներառված հարցերը, մեր կարծիքով, հնարավորություն կնձեռեն՝ տարբեր ոլորտային օրենսդրություններում ունենալու լիարժեք պատկերացում ՏԻՄ - գործարար հարաբերություններին վերաբերվող դրույթների թերի կամ լավ կողմերի մասին:

3. Նախնական ուսումնասիրությունների արդյունքները և նշված հարցաշարը ներկայացվել են ՀՀ վարչապետին, որից հետո ՀՀ վարչապետի հանձնարարականով ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ մշակույթի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ սպորտի և երիտասարդության, ՀՀ կրթության և գիտության նախարարներին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահներին ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված հարցաշարը և վերջիններիս առաջարկվել է վերլուծել ոլորտային օրենսդրության դրույթներն ու դրա արդյունքում լրացնել հարցաշարերը՝ համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ:

4. Վերոնշյալ հարցաշարի պատասխանները վեր են լուծվել նախարարությունում՝ շահագրգիռ պետական մարմինների պատասխանատուների մասնակցությամբ: Վերլուծությունից հետո ՀՀ կառավարության քննարկմանն է նեկայացվել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ ՏԻՄ-գործարար հարաբերությունների պարզեցման, հստակեցման և գործող ընթացակարգերի բարելավման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:

2.11. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման՝ ՀՀ ՏԿՆ-ի մասով միջոցառումների ծրագրի կատարման ապահովում

1. Տարվա ընթացքում իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի օբյեկտիվ կարիքների ուսումնասիրության և այլ չափանիշների վրա հիմնված, տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ (համայնքների բյուջեների ծախսերի եռամսյա և եկամուտների ամենամսյա մոնիթորինգ, վարչարարության բարձրացում, մշակվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ՀՌԻՄԾ 70.7 կետ):

2. Մշակվել և ՀՀ մոտ 340 համայնքներում ներդրվել է համայնքի սեփականություն համարվող գույքի (հողի, շենքերի և շինությունների) կառավարման համակարգը (ՀՌԻՄԾ 70.8 կետ):

3. Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նպատակ ունի բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, ինչպես նաև օրենսդրորեն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը (ՀՌԻՄԾ 72.1 կետ):

4. Համայնքների բյուջեների և դրանց կատարման հաշվետվությունների հրապարակայնության ապահովման գործընթացը վերահսկվել է. իրականացվել է եռամսյակային մոնիթորինգ: (ՀՌԻՄԾ 72.2 կետ):

5. Առ 01.10.2012թ.՝ համայնքների ղեկավարների ընդունելություններին մասնակցել է թվով 33731, իսկ ավագանու ընդունելություններին՝ 5770 քաղաքացի (ՀՌԻՄԾ 72.4 կետ):

6. ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասնագետների կողմից իրականացվել է մոնիթորինգ՝ համայնքի սեփականություն համարվող գույքի սակարկությունների իրականացման գործընթացի հրապարակայնության և թափանցիկության նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում տրվել են համապատասխան պարզաբանումներ (ՀՌԻՄԾ 72.5 կետ):

7. Տարվա ընթացքում շարունակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգերի ներդրումը՝ համակարգը շահագործող ներդրվված համայնքների քանակը հասել է մոտ 340-ի: Գործում են քաղաքացիների սպասարկման թվով 11 գրասենյակներ: Աշխատանքները շարունակվում են: (ՀՌԻՄԾ 72.6 կետ):

8. 2012 թվականի ընթացքում տարբեր հարթակներում կազմակերպվել են քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ՝ նվիրված համայնքային զարգացման ռազմավարական ծրագրերին:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2013 թվականի միջոցառումների ծրագրի ՀՀ տարածքային կառավարման նախարարության հատվածում նախատեսվում է հետևյալ միջոցառումը՝ մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ կսահմանվեն համայնքի զարգացման ծրագրին ներկայացվող պահանջները (ՀՌԻՄԾ 73.4 կետ):

9. Շարունակվել է իրավունքի պետական գրանցում չունեցող համայնքային սեփականություն համարվող վարչական շենքերի և շինությունների գրանցման գործընթացը (ՀՌԻՄԾ 73.6 կետ):

2.12. Տեղական ինքակառավարման բնագավառի զարգացմանն ուղղված միջազգային համագործակցություն

2012 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝

- ԳՄՀԸ-ի (GIZ) հետ՝ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ներառում է երեք թեմատիկ ոլորտներ.

- Տարածքային բարեփոխումներ՝ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի կիրարկման նպատակով՝ ուսումնասիրությունների իրականացում ՀՀ չորս մարզերում:

- Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ և համայնքների էլ. կառավարում: Նախկինում Հայաստանի 10 համայնքներում ԳՄՀԸ-ի օժանդակությամբ հիմնվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ և ներմուծվել է էլեկտրոնային կառավարման համակարգ՝ Կառավարման Տեղեկատվական Համակարգը: Համայնքների համար սա նշանակում է ներքին վարչարարական գործընթացների վերափոխում: Մեկ պատուհանի սկզբունքի ներմուծմամբ քաղաքացիները բոլոր հարցերի համար (օրինակ՝ սոցիալական ծառայություններ, շինարարության թույլատվություններ և այլն) կարող են դիմել մեկ կենտրոնացված գրասենյակի, որով ավելի մատչելի է դառնում հանրային ծառայությունների մատուցումը: Միաժամանակ բարելավվում է համայնքային կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը: Նախարարությունը հետագայում ցանկանում է ավելացնել քաղաքացիների սպասարկման գրասենյակների թիվը և խթանել Կառավարման Տեղեկատվական Համակարգի օգտագործումը այս պահին իրականցվող ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

- Համայնքային ծրագրային բյուջետավորում՝ ընտրված համայնքներում փորձնական ծրագրերի իրականացման օժանդակություն: Դրա մի մասն է կազմում նաև ուղեցույցների նախագծերի պատրաստումը, գենդեր-զգայուն խնդիրների և մասնակցության հարցերի ներգրավումը:

- 2012թ. ծրագիրը օժանդակում է նախարարությանը կարողությունների զարգացման ռազմավարության մշակման գործում տարածքային և համայնքային կառավարման ներկայացուցիչների միջև համագործակցության համար:

- «Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հետ.

- «Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ» փաստաթղթի մշակում: Փաստաթղթում փորձ է արվում ներկայացնելու տեղական ինքնակառավարման ապակենտրոնացմամբ պայմանավորված պետության և ՏԻՄ-երի իրավասությունների հստակ տարանջատման, տեղական ժողովրդավարության մշակույթի ձևավորման իրական մեխանիզմները, տեղական ինքնակառավարման բնագավառը կարգավորող հրատապ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ՏԻՄ ընտրական համակարգի հետագա կատարելագործման, վարչական և ֆինանսական ապակենտրոնացման մի շարք առանցքային հարցերի լուծումներ:

- ՏԻՄ և քաղաքացիական հասարակության համագործակցության դրամաշնորհների շրջանակում իրականացվել է 14 ծրագիր: Ծրագրերն ուղղված էին, մասնավորապես, համայնքների ռազմավարական պլանավորմանը, համայնքային բյուջեների լսումների կազմակերպմանը, կենցաղային աղբի հեռացման բարելավմանը և այլն: Ընդհանուր գումարը՝ 77 մլն դրամ:

- ՏԻՄ խրախուսման դրամաշնորհների շրջանակում 31 ծրագիր ավարտվել են, ևս 13 ծրագիր կավարտվեն մինչև 2013թ. ապրիլ: Ծրագրերի ընդհանուր արժեքը շուրջ 372 մլն դրամ է, որից 182 մլն կազմել է Քաունթերփարթի ֆինանսավորումը, իսկ 190 մլն՝ համայնքների համաֆինանսավորումը: Նշված դրամաշնորհներով 2013թ. Քաունթերփարթը նախատեսում է բոլոր 43 գործընկեր համայնքներում ֆինանսավորել ծրագրեր շուրջ 430 մլն դրամի սահմաններում:

- Քաղաքացիական նախաձեռնության և համայնքային զարգացման դրամաշնորհների շրջանակում իրականացվել է 31 ծրագիր հիմնականում գյուղական համայնքներում՝ շուրջ 52 մլն դրամի արժողությամբ, որին ավելացել է մոտ 60% համայնքների ներդրում: Այս դրամաշնորհների շրջանակներում 2013թ. նախատեսվում է ծրագրեր ֆինանսավորել բոլոր 43 համայնքներում մոտ 86 մլն դրամի սահմաններում:

- 41 մլն դրամ հատկացվել է Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբներին /ՀԵՆԱ-ներին/ ՝ փոքր համայնքային նախաձեռնություններ իրականացնելու, քաղաքացիական ակտիվության և կամավորականության խրախուսման նպատակով:

- Համայնքային ծառայողների, ավագանու և համայնքի ղեկավարների ուսուցման նպատակով մշակվել է 14 մոդուլից բաղկացած ուսումնական ծրագիր, հիմնվել է 2 ուսումնական կենտրոն Վանաձոր և Սիսիան քաղաքներում, պատրաստվել են շուրջ 60 դասընթացավարներ, 15 համայնքների ընդհանուր թվով 60 մասնակիցների համար անցկացվել են դասընթացներ: 2013թ. ակնկալվում է ևս մեկ ուսումնական կենտրոնի բացում և շարունակական դասընթացներ գործընկեր համայնքների ավագանիների, աշխատակազմի և համայնքների ղեկավարների համար:

- ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և Ասիական Զարգացման Բանկը «Կայուն քաղաքաշինական զարգացման ներդրումային ծրագրի» (Sustainable Urban Development Investment Program) երկրորդ տրանշի շրջանակներում աշխատանքներ են իրականացնում 4 երկրորդային քաղաքների համար (Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ) քաղաքաշինության պլան և ներդրումային ծրագիր մշակելու ուղղությամբ: Ծրագրի հիմնական նպատակներն են.
  - ✓ տեղական համախոհների հետ միասին այս 4 քաղաքների համար մշակել 10-ամյա քաղաքային զարգացման պլան՝ կենտրոնանալով տնտեսական և զբոսաշրջության զարգացման վրա.
  - ✓ բացահայտել անհրաժեշտ ներդրումներ՝ բարելավելու ենթակառուցվածքների ու ծառայությունների ոլորտը և մշակելու կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագիր.
  - ✓ բացահայտել մասնավոր հատվածի հնարավորությունները և սահմանել համապատասխան կարգավորումներ, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, կարողությունների զարգացում՝ խթանելով համայնքի բազայի վրա հիմնված էկոտուրիզմը և տեղական արտադրությամբ արդյունաբերությունը.
  - ✓ աջակցել հաղորդակցության/գովազդային/ նյութեր պատրաստելուն՝ Քաղաքային Զարգացման Պլանը /ՔԶՊ – CDP/ ներդրումային հնարավորությունները շուկա դուրս բերելուն, գովազդելուն ու ցուցադրելուն և յուրաքանչյուր քաղաքում առաջարկված մասնավոր հատվածի ներգրավածությանը.
  - ✓ կմշակվի ներդրումային ծրագիր՝ ծախսերի նախահաշվով և իրականացման գրաֆիկով, քաղաքի տեսլականը գովազդելու համար կպատրաստվեն հաղորդակցության ու մատակարարման նյութեր, որի հիման վրա կձևավորվի քաղաքի ինտերնետ կայքը և կկազմակերպվի ցուցահանդես քաղաքի տնտեսական ոլորտի զարգացման թեմայով:

2.13. Այլ միջոցառումներ

- Համայնքների վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին հավանություն տալու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծեր (թվով 3)՝ պետական

սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման ծրագրերի իրականացում՝ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշման համապատասխան:

- Տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններ նշանակելու և ֆինանսավորելու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծեր (թվով 11)՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովում:

- Ս.թ. հոկտեմբերի 5-6-ին Ջերմուկ քաղաքում կազմակերպվել և անց է կացվել գյուղական համայնքների 2-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցում էին պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում էր մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված էր թվով տասը համայնքապետ:

Համաժողովի ընթացքում կազմակերպվեցին բանախոսություններ և քննարկումներ հետեւյալ վեց թեմատիկ աշխատանքային խմբերում.

1.տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձեւավորում,

2.տեղական եկամուտների վարչարարության խնդիրները,

3.տեղական տնտեսական զարգացումը և տեղական իշխանությունների դերը,

4.տարածքային համաչափ զարգացում, առաջանցիկ մեխանիզմների մշակում, հրատապ ծրագրերի ամփոփում,

5.կոշտ կենցաղային թափոնների կառավարումը Հայաստանում,

6. տեղական ժողովրդավարություն, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն:

Միջոցառումը նպատակ ուներ տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը:

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1. Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների գրանցամատյանի վարում

Նախարարության կողմից վարվում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյան, որում ներառված են համայնքներից, կարգով սահմանված ձևերին համապատասխան՝ 6122 անձանց վերաբերյալ ստացված տվյալները: Գրանցամատյանի տվյալների համաձայն՝ 2012թ.-ի դեկտեմբերի 24-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6778-ն են, որոնցից զբաղեցված են 6122–ը, կամ 90 %-ը: Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից կանայք կազմում են 51.6%-ը, տղամարդիկ՝ 48.4%-ը: Հաշվետու ժամանակահատվածում օրենքով նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերում բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի չափանիշները չներառելու մասին համաձայնություն է տրվել միայն 8 համայնքների: Ընդհանուր առմամբ, մինչև 1000 բնակչություն ունեցող 441 համայնքներից համաձայնություն է տրվել 269 համայնքներին:

3.2. Վերապատրաստման գործընթացի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում հերթական վերապատրաստումն անցել է 1532 համայնքային ծառայող, որից 1028-ը՝ պետական բյուջեի, 280-ը՝ համայնքի բյուջեի (Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողները), իսկ 224-ը՝ այլ միջոցների հաշվին: 2010 թվականից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախաձեռնել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստումը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009–2012 թթ. միջոցառումների ծրագրի մի շարք կետերի կատարման արդյունավետության բարձրացմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում տեղական ինքնակառավարման մարմիններից վերապատրաստվել են ընդհանուր

առմամբ 740 համայնքի ղեկավարներ և ավագանիների անդամներ, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների 75 աշխատակից:

3.3. Համայնքային ծառայողների ատեստավորման և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների անցկացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում ատեստավորվել են թվով 1284 համայնքային ծառայողներ: Ատեստավորման արդյունքներով 30 համայնքային ծառայող ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ այդ պաշտոններին չհամապատասխանելու հիմքով: Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 949 մրցույթներ, որոնցից կայացել են 754-ը կամ շուրջ 80%-ը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Մրցույթների մասին տեղեկությունները տրամադրվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը: Նախարարությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանում հայտարարված մրցույթներին մասնակցելու համար դիմումների ընդունման գործընթացին (հայտարարված 400 պաշտոնների մրցույթներին մասնակցելու համար ընդհանուր 497 դիմումներից 27-ը ընդունվել է նախարարության կողմից): Նախարարության ներկայացուցիչները մասնակցել են Երևանի քաղաքապետարանում հայտարարված 400 թափուր պաշտոնների համալրման մրցութային հանձնաժողովների աշխատանքներին:

3.4. Համայնքային ծառայության կադրերի ռեզերվ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել են 5 անձինք: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների կողմից կադրերի ռեզերվ հարցում է կատարվել 953 ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու համար, որոնց մասին կազմված հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Հարցում արված պաշտոններից 4-ի համար կադրերի ռեզերվից ներկայացվել են համապատասխան թեկնածություններ, որոնց արդյունքում նշված անձինք օրենքով սահմանված կարգով հանվել են կադրերի ռեզերվից՝ նրանց հետ համայնքային ծառայության պաշտոններում ժամկետային աշխատանքային պայմանագրեր կնքելու հիմքով:

3.5. Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննությունների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում նշանակվել է թվով 2 ծառայողական քննություն, որոնցից մեկը նշանակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, մյուսը՝ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ:

Ծառայողական քննություններն իրականացվել են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 1003-Ն որոշմամբ հաստատված կարգով և սահմանված ժամկետներում, որոնց արդյունքներով ընդունվել են համապատասխան իրավական ակտեր:

3.6. Կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության իրականացում

Համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով նախարարության կողմից «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.2-րդ հոդվածի համաձայն կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն է իրականացվել Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզերի թվով 80 քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում (յուրաքանչյուր մարզում՝ 8-ական համայնք):

Նախարարության կողմից համայնքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում Երևանի քաղաքապետին, ՀՀ մարզպետներին ու համապատասխան համայնքների ղեկավարներին ներկայացվել են հայտնաբերված թերությունները և դրանց վերացման համար անհրաժեշտ առաջարկություններ: ՀՀ մարզպետներին տրվել են հանձնարարականներ՝ նշված թերությունները վերացնելու, ինչպես նաև մարզերի մյուս համայնքներում նմանատիպ թերությունները բացառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1. Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խմբի նիստ

ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի արձանագրության շրջանակներում ստեղծված հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խմբի առաջին նիստը տեղի ունեցավ 2012թ. մարտի 13-ին Գյումրիում:

Նիստի ընթացքում քննարկվեցին միջտարածաշրջանային համագործակցության, իրավապայմանագրային բազայի զարգացման, բազմաբնակարան շենքերի կառավարման և կոմունալ տնտեսության ոլորտում փորձի փոխանակման ու համագործակցության, տարածքային համաչափ զարգացման ծրագրերի մշակման և իրականացման հարցում փորձի փոխանակման, հումանիտար ոլորտում գործակցության հարցեր, ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ:

4.2. Երևանում երկրորդ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի կայացում

Երևանում 2012թ. հոկտեմբերի 13-ին տեղի է ունեցել հայ-ռուսական միջտարածաշրջանային երկրորդ համաժողովը «Հայաստան և Ռուսաստան. միջտարածաշրջանային երկխոսություն-2012» խորագրով:

Համաժողովի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի և Ռուսաստանի պետական իշխանության կենտրոնական և տարածաշրջանային մարմինները, հասարակական կազմակերպությունները, փորձագիտական և գիտական շրջանակները, ԶԼՄ-ները ներկայացնող ավելի քան 300 մարդ, համաժողովի ընթացքում մասնակիցները քննարկեցին միջտարածաշրջանային առևտրատնտեսական և հումանիտար համագործակցության հետագա ընդլայնման, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում, ինչպես նաև Եվրասիական տարածքում ինտեգրվելու գործընթացներում Ռուսաստանի և Հայաստանի փոխգործության հարցեր: Համաժողովի մասնակիցները որոշեցին անց կացնել հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովը 2013 թվականին: Համաժողովի շրջանակում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր,այդ թվում՝ համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր ՀՀ կառավարության և ՌԴ Արխանգելսկի մարզի, ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերի, ՀՀ Լոռու մարզի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության միջև:

4.3 2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով միջոցառումների ծրագրի նախապատրաստում

2013 թվականին ԵԽ-ում Հայաստանի նախագահության ստանձնման հետ կապված ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը մշակել և սահմանված կարգով ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման նախարարության իրավասության շրջանակներում նախատեսվող միջոցառումների ծրագրի նախագիծը:

4.4 Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստի անցկացում

2012թ. նոյեմբերի 7-ին Բաղդադում կայացավ Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի և Իրաքի Հանրապետության փոխվարչապետ Ռոշ Նուրի Շաուեյսի համանախագահությամբ: Նիստի ընթացքում քննարկվեցին Հայաստանի և Իրաքի միջև տնտեսական, առևտրային, ներդրումների, գիտատեխնիկական, առողջապահության, գյուղատնտեսության, տրանսպորտային հաղորդակցության բնագավառներում համագործակցությանն առնչվող հարցեր, երկուստեք կարևորվեց առևտրատնտեսական հարաբերությունների և ապրանքափոխանակության մակարդակի բարձրացման ու ընդլայնման անհրաժեշտությունը: Ձեռք բերվեցին պայմանավորվածություններ մի շարք ճյուղային ոլորտներում իրավապայմանագրային հենքի ձևավորման ուղղությամբ, ինչը կնպաստի տնտեսական հարաբերությունների ակտիվացմանն ու տարբեր ոլորտներում համագործակցության զարգացմանը:

5. ՓԱԽՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են փախստականների խնդիրներին առնչվող շուրջ 520 դիմումներ, որոնք եղել են հիմնականում բնակարանային ապահովման հարցերով: Թվով 120 փախստականների խնդիրներ քննարկվել են փախստականներին ժամանակավոր կացարաններում բնակեցնելու համար ուղեգրերի տրամադրման նպատակով ստեղծված աշխատանքային խմբում: Փախստականների բնակարանային պայմանները տեղում ուսումնասիրելու նպատակով կազմակերպվել են տնային այցելություններ: 17 փախստական ընտանիքների տրամադրվել է հանրակացարանում բնակեցման ուղեգիր:

6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2012թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ստացվել, մշակվել եւ «Mulberry» համակարգի միջոցով գրանցվել է 18316 մտից փաստաթուղթ, միաժամանակ ելից է եղել 9071 գրություն: 2012թ. ընթացքում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գեւորգյանի 2008թ. հրամանով հաստատված «ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգի» համաձայն՝ իրականացվել է 12 ընդունելություն, որին մասնակցել է 66 քաղաքացի:

7. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Հաշվետու տարում ՀՀ արխիվային գործի զարգացման 2012 թ. աշխատանքային ծրագրին համապատասխան՝ գործունեություն է ծավալվել ներքոնշյալ հիմնական ուղղություններով:

1. Արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով վերանորոգվել-վերականգնվել է 375.249 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիր՝ 288.217), կարվել-կազմապատվել՝ 28498 թերթ (ծրագիր՝ 25250թ.):
2. Հաշվետու տարում պատասխան է տրվել քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից ստացված 100 թեմատիկ և սոցիալ-իրավական բնույթի 25.314 հարցումի:
3. Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվային պահպանության է ընդունվել 29.209 գործավարական գործ, 12.490 գործ՝ անձնակազմին վերաբերող, անձնական ծագման 3.001 գործ և ցրոն վիճակով՝ 203.949 թերթ: Համալրվել է նաև 9596 պահպանման միավոր կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, որից 6946 կինո և 2650 ֆոտո:
4. Տարվա ընթացքում արխիվն ունեցել է 524 ուսումնասիրող:
5. 2012թ. լույս են տեսել փաստաթղթերի և նյութերի 6 ժողովածու, 1 մենագրություն և 1 համացանկ՝

- «Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ» (փաստաթ. ժողովածու),

- «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ» (Հատոր 1-ին՝ Վանի նահանգ: Հատոր 2-րդ՝ Բիթլիսի նահանգ, հատոր 3-րդ՝ Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ: Պարսկահայք) փաստաթղթերի եռահատոր ժողովածու,
- «Հայերի մասնակցությունը 1812թ. հայրենական պատերազմին» (փաստաթ. ժողովածու),
- «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.» (փաստաթ. ժողովածու),
- Միքայել Թումանյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտության պատմությունը 1918-1920թթ.» մենագրությունը,
- «Ղրիմի հայկական եկեղեցիները» համացանկ:

Տպագրության է նախապատրաստվել «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտատեղեկատվական հանդեսի N 1 և N 2 միացյալ համարը:

6. ՀԱԱ ցուցահանդեսներն ընդլայնել են իրենց աշխարհագրական սահմանները:

Կազմակերպվել են՝

- «Ղրիմի հայկական եկեղեցու պատմությունը» խորագրով արխիվային փաստաթղթերի և նյութերի ցուցահանդեսը (Ղրիմ, Սիմֆերոպոլ),
- «Թիֆլիսի հայկական եկեղեցիները՝ երեկ և այսօր» (Թբիլիսի, Հայարտուն),
- Ալավերդի, Արմավիր, Վեդի, Մարալիկ, Չարենցավան քաղաքներում կազմակերպվել են այդ համայնքների պատմությանը նվիրված ցուցահանդեսներ:

7. Վերանորոգվել է արխիվի Արմավիրի, Արթիկի և Թումանյանի տարածքային ներկայացուցչությունների զբաղեցրած տարածքները:

8. 2012թ. պետբյուջեից ստացվել է 377,8 միլիոն դրամ սուբսիդիա, 18,5 միլիոն դրամ դրամաշնորհ: Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հասույթը կազմել է մոտ 61 միլիոն դրամ, որից 38,2 միլիոն դրամը ֆիզիկական անձանց մատուցված ծառայությունից (2011թ. այն կազմել է 26,7 միլ. դրամ):

Հավելված 1

Տեղեկանք

ՀՀ մարզերում հրատապ խնդիրների լուծման նպատակով 2012 թվականին իրականացված կապիտալ ծրագրերի վերաբերյալ

ՀՀ	Մարզեր	Նախատեսված ծրագրերի քանակը	Քաղաքային համայնքներում իրականացվող ծրագրերի քանակը	Գյուղական համայնքներում իրականացվող ծրագրերի քանակը	Ըստ ոլորտների իրականացված ծրագրերի քանակը													Ըստ համայնքների իրականացված ծրագրերի քանակը			3-րդ հրատապ ծրագրի կատարման տոկոսը	4-րդ հրատապ ծրագրի կատարման տոկոսը
					դպրոցաշինություն	նախադպրոցական հաստատություններ	մշակութային օբյեկտներ	բնակարանաշինություն	գազաֆիկացում	ճանապարհաշինություն	հանրային կենտրոններ	առողջապահական օբյեկտներ	ջրամատակարարում	ոռոգման ջուր	մարզական օբյեկտներ	բնակարանային խնդիրների լուծման նպատակով կենտրոնացված տրանսֆերտներ	այլ ծրագրեր	նախագծահետազոտական ծախսեր	քաղաքային	գյուղական	Ընդամենը		
1	Արագածոտն	75	15	60	Ծրագրերի քանակը (տասը մարզում իրականացվող)													530,644.1	3	54	57	98.1	25.2
2	Արարատ	73	18	55	210	59	69	83	46	130	35	18	71	18	3	8	55		4	41	45	98.5	31.1
3	Արմավիր	51	18	33															3	27	30	98.6	9.4
4	Գեղարքունիք	90	35	55															4	29	33	91.3	18.6
5	Լոռի	103	46	57															8	53	61	99.7	25.4
6	Կոտայք	74	23	51	Ծրագրերի գումարը (տասը մարզում իրականացվող)														5	36	41	100	27.3
7	Շիրակ	63	27	36	4,833,481.3	978,073.5	1,494,140.9	1,336,498.6	605,030.1	4,422,265.3	613,892.1	202,460.3	1,096,719.6	387,189.5	38,000.4	332,087.0	452,638.2		3	33	36	99.7	56.3
8	Տավուշ	119	33	86															5	47	52	99.4	25.3
9	Սյունիք	34	24	10															5	7	12	98.4	27.1
10	Վայոց ձոր	49	12	37															3	24	27	100	14.3
	Ընդամենը	**731**	**251**	**480**	**17,323,120.9**														43	351	394	98.3	27.4